

Վազմված է «19.» «10» 2019թ.  
Բաղկացած է 10 (տաս) թերթից  
Ընդամենը՝ 2 (երկու) օրինակ  
Օրինակ 1

ՀԱՍՏՏՎԱԾ Է՝

<<Վաղվա Արցախ>> կուսակցության  
19.10.2019թ. կայացած հիմնադիր  
համագումարի որոշմամբ  
/N 01 արձանագրություն/

Նախագահ՝



Տ.Պետրոսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ԱՀ արդարադատության նախարարության  
աշխատակազմի իրավաբանական անձանց  
պետական ռեգիստրի գործակալության  
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման ամսաթիվ՝ «09.» «12» 2019թ

Գրանցման համար 443.172.1105133

ՀՎՀՀ 90045998



Գործակալության պետ՝ Գ.Մաքսիմովա



« Վ Ա Ղ Վ Ա Ա Ր Ց Ա Խ »  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

## Նախաբան

«Վաղվա Արցախ» կուսակցությունը (այսուհետ նաև՝ Կուսակցություն) հանդես է գալիս որպես ինստիտուցիոնալ հանրային-քաղաքական կառույց, որի գործունեության հիմնական նպատակն է առաջադիմական լուծումների և բարեփոխումների միջոցով կառուցել իրավունքի գերակայության և օրենքի առաջ յուրաքանչյուրի հավասարության վրա հիմնված կայուն, անվտանգ և զարգացած Արցախ, որտեղ Մարդը գերագույն արժեք է:

Այդ նպատակին հասնելու համար Կուսակցությունը ձգտելու է արդարության, իրավունքի և օրենքի գերակայության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, ժողովրդավարության հիման վրա ձևավորել կայացած և իրազեկ քաղաքացիական հասարակություն: Նման հասարակության ձևավորման համար անհրաժեշտ է հանրային իրավագիտակցության բարձրացում, որը պետք է սկսվի անհատի վերափոխումից: Կուսակցության գործունեությունը հասարակության հետ նպաստելու է այդ վերափոխմանը, հասարակության քաղաքական սկզբունքների ձևավորմանն ու արտահայտմանը:

«Վաղվա Արցախ» կուսակցությունը Արցախի կարևորագույն խնդիրներից է համարում.

## 1. Արցախի բնակչության պաշտպանությունը արտաքին ագրեսիայից

Արցախի անվտանգության ապահովման գլխավոր երաշխիքն է հանդիսանում Հայոց բանակը: Բանակի մարտունակության բարձրացման կարևոր պայմաններից ենք համարում՝

1.1 Սպայական և զինվորական անձնակազմի կրթական մակարդակի բարձրացումը, ռազմական գիտելիքների զարգացումը:

1.2 Ջինձառայողների իրավունքների պաշտպանության և արժանապատվության ապահովումը:

1.3 Ծառայության վայրերում կենցաղային պայմանների բարելավումը:

1.4 Ջինձառայողների շրջանակներում բարոյահոգեբանական վիճակի բարձրացմանը միտված մշտական աշխատանքների իրագործումը:

1.5 Արդիական ռազմական արդյունաբերության զարգացումը:

1.6 Առաջնագիծը ժամանակակից սարքավորումներով և զինտեխնիկայով համալրումը՝ նվազեցնելով մարդկային գործոնի դերը:

1.7 Պայմանագրային զինձառայողների հարցով պրոֆեսիոնալ բանակի ստեղծմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

1.8 Կրթական հաստատություններում ռազմական պատրաստության որակի բարձրացումը:

## 2. Արցախի բնակչության իրավունքների պաշտպանությունը, օրենքի գերակայության ապահովումը

«Վաղվա Արցախ» կուսակցությունը պետականաշինության զարգացման ուղին տեսնում է Արցախում իրավունքի գերակայության երաշխավորմամբ իրավական պետության կառուցման մեջ, և գտնում է, որ իրավունքի գերակայության ապահովումը հնարավոր է հետևյալ քայլերի իրականացմամբ.

2.1 Իրավունքի՝ որպես մարդու համընդհանուր ազատության, հավասար հնարավորությունների և արդարության անհրաժեշտ ձևի սահմանում:

2.2 Օրենսդրության մեջ իրավունքի ամբողջական ամրագրում և օրենքների գերակայության երաշխավորում:

2.3 Իրավապահ մարմիններում աշխատակիցների պրոֆեսիոնալիզմի և բարոյականության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

2.4 Քաղաքացի-իրավապահ մարմինների վստահության և համագործակցության մակարդակի բարձրացում և ամրապնդում:

2.5 Դատական համակարգի անկախացում՝ ինչպես գործադիր և օրենսդիր մարմիններից, այնպես էլ դատական համակարգի այլ աստիճանների և դատական պաշտոնյաների ազդեցությունից: Անկախ դատական համակարգը նպաստելու է հասարակական-քաղաքական և տնտեսական մրցակցությանը, սեփականության և այլ իրավունքների պաշտպանությանը:

2.6 Մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի կայացում և կիրառելիություն:

### 3.Բնակչության առողջության մակարդակի բարձրացումը

Արցախի առողջապահական ոլորտում առկա են խնդիրներ ինչպես բժշկական օգնության կազմակերպման և ծառայությունների որակի, այնպես էլ հասանելիության և մատչելիության հարցերում: Բավականին լուրջ խնդիր է հանդիսանում նաև դեղամիջոցների ներկրման և որակի վերահսկողությունը: Այս խնդիրների լուծման համար կուսակցությունն առաջարկում է.

3.1 Պետական պարտադիր բժշկական ապահովագրության մշակումն ու ներդնումը: Բժշկական ապահովագրությունն իր մեջ կներառի բժշկական ծառայությունների լայն փաթեթ, ինչպես նաև կանխարգելիչ գնումների ժամանակացույց՝ ուղղված հիվանդությունների վաղ հայտնաբերմանն ու բուժմանը: Ապահովագրությունը նաև հնարավորություն կընձեռնի բուժաշխատողներին առավել բարձր վարձատրություն՝ խթանելով էլ ավելի արդյունավետ աշխատանքին:

3.2 Բուժաշխատողների հմտության և գիտելիքների պարբերաբար ստուգումը ասեստավորման միջոցով, նրանց գիտելիքների բարձրացմանն ուղղված վերապատրաստման ծրագրերի իրականացումը:

3.3 Կլինիկական ուղեցույցների և հաճախորդների ուղղորդման գործելակարգերի մշակումն ու ներդրումը:

3.4 Բուժհաստատություններում ժամանակակից սարքավորումներով համալրումը:

3.5 Դեղորայքի ներկրման, շրջանառության, գնագոյացման և որակի խիստ վերահսկողությունը:

#### 4. Կրթության մակարդակի բարձրացումը և գիտության զարգացումը

Կրթության ոլորտը մարդկային կապիտալի և երկրի երկարաժամկետ կայուն զարգացման համար առանցքային նախապայման է: Կրթությունը պետք է ապահովի արժանապատիվ աշխատանք: Ձարգացած, որակյալ, մրցակցային, ապագային միտված ազգային կրթական համակարգ ունենալը մեր կարևորագույն նպատակներից մեկն է:

Կուսակցությունն իր ծրագրում նախատեսում է հետևյալը.

- 4.1 Մշակել և կիրառել աշխատուժի շուկայի և կրթության փոխկապակցվածության հայեցակարգ՝ աշխատաշուկայի համալրման նպատակով:
- 4.2 Ստեղծել տարբերակված կրթական հնարավորություն՝ ըստ ուսումնասողի մասնագիտական աճի նախասիրության:
- 4.3 Նվազեցնել պետության մասնակցությունը կրթական հաստատությունների կառավարման մեջ՝ երաշխավորելով կրթական և գիտական գործունեության ավելի բարձր մակարդակի ինքնուրույնություն:
- 4.4 Ներդնել բուհերի հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմներ, պետական ֆինանսավորումը տրամադրել ըստ կատարողական ցուցանիշների:
- 4.5 Կազմակերպել կրթության ոլորտում ներգրավված կադրերի շարունակական վերապատրաստում, զարգացման խրախուսում, տարբերակված վարձատրության մեխանիզմների ներդրում:
- 4.6 Իրականացնել նախադպրոցական հաստատությունների ֆինանսավորման աճ պետական և համայնքային բյուջեներից կատարվող հատկացումների միջոցով:
- 4.7 Ուսումնամեթոդական նյութերի և երաշխավորությունների մշակում:
- 4.8 Ներդնել հիմնարար գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման պետական ծրագիր:
- 4.9 Բարձրացնել մանկավարժների աշխատավարձերը՝ խթանելով լավագույն կադրերի հոսքը դեպի դպրոցներ:
- 4.10 Դպրոցների շենքային, նյութատեխնիկական և լաբորատոր պայմանների նվազագույն ընդունելի շեմ սահմանել և առաջիկա հինգ տարում վերանորոգել, համալրել բոլոր այն դպրոցները, որոնք չեն համապատասխանում սահմանված պայմաններին:

Կրթական հաստատությունները բացի գիտելիքներ տալուց, պետք է նպաստեն ստեղծագործ, նախաձեռնող, քննադատական մտածելակերպով օժտված, մարդու իրավունքներն ու ազատությունները հարգող, սոցիալապես պատասխանատու քաղաքացիների ձևավորմանը:

## 5. Սոցիալական ապահովության մակարդակի բարձրացումը

Կուսակցությունը սոցիալական գլխավոր խնդիրներից է համարում.

5.1 Աղքատության մակարդակի նվազեցումը բնակչության աշխատանքային զբաղվածության միջոցով:

5.2 Համակարգային կենսաթոշակային բարեփոխումների միջոցով ապահովել քաղաքացիների անհոգ, արժանապատիվ ծերությունը:

5.3 Սահմանափակ կարողություններով անձանց թոշակների բարձրացումը, նրանց ինտեգրումը հասարակությանը:

5.4 Կանանց և երեխաների նկատմամբ բռնության բացառումը, նրանց իրավունքների պաշտպանությունը:

5.5 Փախստականների կեցության խնդրի լուծումը:

## 6. Արդյունավետ հանրային կառավարումը

Արդյունավետ հանրային կառավարում իրականացնելու նպատակով Կուսակցությունը պլանավորում է.

6.1 Պետական կառավարման համակարգում ճիշտ կադրային քաղաքականության մշակում և իրագործում:

6.2 Բյուջետային գործընթացի իրականացում «Ծրագրային բյուջետավորման» մեխանիզմի լիարժեք կիրառմամբ, որտեղ շեշտը կդրվի բյուջետային հատկացումներից ստեղծված արդյունքին:

6.3 Պետական կառավարման համակարգում օգտագործվող նախկինում ընդունված նորմատիվային բազայի վերանայում և նոր մոտեցումների հիման վրա նորմատիվների մշակում՝ համապատասխանեցնելով դրանք ժամանակակից պահանջներին:

6.4 Պետական կառավարչական հիմնարկների նախահաշիվներում նախատեսված պահպանման ծախսերի օպտիմալացում՝ պետական բյուջեի միջոցների անարդյունավետ օգտագործումը կանխելու նպատակով:

## 7. Տնտեսության զարգացման ապահովումը

Կուսակցությունը համարում է, որ տնտեսական կայուն զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է.

7.1 Ստեղծել հավասար մրցակցային պայմաններ:

7.2 Պայքարել կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ:

7.3 Մշակել և իրականացնել արդյունավետ հարկային քաղաքականություն՝ արտոնություն տրամադրելով փոքր և միջին ձեռներեցությանը:

7.4 Ապահովել պետական գնումների, բյուջեի կատարման թափանցիկությունը:

7.5 Խթանել թեթև և միջին արդյունաբերության զարգացումը:

7.6 Խթանել բարձր տեխնոլոգիաների, վերարտադրողական էներգիայի, գյուղատնտեսության և այլ տնտեսական նորարարական ճյուղերի զարգացումը:

7.7 Ստեղծել նպաստավոր պայմաններ տնտեսական գործունեություն սկսելու համար՝ ապահովելով անհրաժեշտ հարկային արտոնություններ:

7.8 Մշակել և ներդնել նոր աստիճանական հարկային համակարգ:

7.9 Ստեղծել ներդրողների համար մատչելի պայմաններ:

7.10 Իրագործել հակամենաշնորհային քաղաքականության:

## 8. Կոռուպցիայի դեմ պայքարը

Կուսակցությունը համարում է, որ կոռուպցիան պետության գլխավոր չարիքներից է, որը խաթարում է տնտեսության զարգացմանը, արգելափակում է ժողովրդավարացումը: Կոռուպցիայի դեմ պայքարը պետք է ներառի.

8.1 Գործադիր, օրենսդիր և դատական իշխանության իրական անկախացումը: Իշխանության մարմինների անկախացումը խիստ կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը և զսպման մեխանիզմ կհանդիսանա՝ հանգեցնելով համակարգային կոռուպցիայի նվազեցմանը ու վերացմանը: Դատական համակարգի անկախացումը կնպաստի արդարադատության անխուսափելիության ապահովմանը:

8.2 Ապահովել տնտեսական մրցակցության մեխանիզմների թափանցիկություն:

8.3 Ներդնել կրթական հաստատություններում հակակոռուպցիոն ծրագրեր՝ բնակչության իրավագիտակցության և իրազեկման մակարդակի բարձրացման նպատակով:

8.4 Իրականացնել լիարժեք պայքար ստվերային աշխատանքային շուկայի դեմ՝ նպատակ ունենալով, կուտակային կենսաթոշակային համակարգին անցնելու հետ կապված,

պաշպանել աշխատողներին թոշակային տարիքում իրենց հասանելի թոշակի գումարը չկորցնելու հարցում, ինչպես նաև ապահովել աշխատող քաղաքացիներին հիփոթեքային վարկավորման դեպքում եկամտային հարկի արտոնությունից օգտվելու հնարավորություն:

8.5 Խստացնել կոռուպցիայի դեմ ուղղված օրենքով նախատեսված պատժամիջոցները:

## 9. Մշակույթը և կրոնը

Կուսակցությունը կարևորում է ազգային մշակույթի պահպանումը, զարգացումը և տարածումը՝ որպես համամարդկային մշակույթի անբաժանելի մաս: Մենք համարում ենք, որ ազգային և համամարդկային մշակույթին ծանոթանալը պետք է սկսվի դեռ նախադպրոցական տարիքից և շարունակվի այլ կրթական հաստատություններում: Նման ծրագրերը կհանգեցնեն ազգային արժեքներին ծանոթանալուն և կնպաստեն քաղաքացիների ազգային ավանդական արժեքների դաստիարակությանը:

Հարգելով բոլոր արցախցիների խղճի, մտքի և դավանանքի ազատության իրավունքը՝ ՎԱԿ-ը համոզված է, որ ՀԱԵ՝ ի դեմս Արցախի թեմի, պետք է զերծ մնա քաղաքականությունից՝ բացառությամբ համազգային նշանակության այնպիսի իրավիճակների, երբ հանրությունը կակնկալի եկեղեցու պաշտոնական տեսակետի բարձրաձայնումը:

## 10. Տարածքային համաչափ զարգացումը

Տարածքային համաչափ զարգացումը Արցախի համար ունի կարևորագույն նշանակություն և ուղղակիորեն կապված է ազգային անվտանգության հետ: Գյուղաթափումը թուլացնում է թե՛ մթերային անվտանգությունը, թե՛ ազգային անվտանգությունը: Ուստի կուսակցությունը համարում է, որ տարածքային համաչափ զարգացումը անվտանգության կարևորագույն գործոններից մեկն է: Կուսակցությունն այս ուղղությամբ նախատեսում է համալիր միջոցառումներ՝ ուղղված ուրբանիզացիայի տեմպերի նվազեցմանը: Այս առումով նախատեսվում է.

10.1 Սահմանամերձ գյուղերի բնակիչներին առաջնային կենսական կարևորագույն միջոցներով ապահովումը:

10.2 Համայնքային բոլոր ճանապարհների բարելավումը:



10.3 Մարզերում կրթական, մշակութային, սոցիալական և առողջապահական բարեփոխումների իրականացումը:

10.4 Սահմանամերձ գյուղերում ձեռներեցության խթանումը՝ սահմանելով արտոնյալ հարկային պայմաններ:

10.5 Գյուղատնտեսական գործունեությանն ուղղված ծրագրերի խթանումը՝ արտոնյալ վարկի տրամադրմամբ:

10.6 Պետական ծրագրերի մշակումը և իրագործումը՝ ուղղված սահմանամերձ գյուղերի բնակչությանը բնակավայրերում ապահովմանը:

## **11. Շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործումը**

Կուսակցությունը հետամուտ է լինելու.

11.1 Վայրի բնության պահպանմանը:

11.2 Ապօրինի անտառահատման դեմ պայքարին:

11.3 Կանաչապատման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

11.4 Ջրային ռեսուրսների խնայողական օգտագործմանը:

Քանի որ ներկա տնտեսական վիճակը թույլ չի տալիս լրիվությամբ հրաժարվել ընդերքի շահագործումից, ապա կուսակցությունն առաջարկում է.

11.5 Լեռնահանքային արդյունաբերության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

11.6 Պետության կողմից լեռնահանքային արդյունաբերության հանդեպ վարվող քաղաքականության վերանայումը, նոր հանքերի շահագործումը պետական միջոցներով, հետազայում ընդերքի օգտագործումից վերջնական հրաժարմամբ:

## **12. Արտաքին քաղաքականությունը**

Արցախի Հանրապետության արտաքին քաղաքականությունը պետք է լինի նախաձեռնողական և միտված լինի Արցախի ժողովրդի հավաքական շահերի և իրավունքների պաշտպանությանը: Ըստ այդմ՝ ՎԱԿ-ը հանդես է գալիս արտաքին հավասարակշռված և պետականամետ քաղաքականության օգտին: Արցախի Հանրապետությունը պետք է շարունակի իր ջանքերը Արցախի միջազգային ճանաչման